

Զեկույց 2008թ. սեպտեմբերի 2-5-ը Սեուլում  
(Նարավային Կորեա) հրավիրված միջազգային  
կոնֆերանսում (նախնական տարբերակ)

**ԻՐԱՎԱԿԱՆ ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՏԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XXI ԴԱՐԻ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ**

**Գ.Գ. Նարությունյան - ՆՏ սահմանադրական դատարանի  
նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր**

Նոր հազարամյակը մարդկությանն առաջադրեց մի շարք մարտահրավերներ, որոնց մեջ առանձնահատուկ կարևորվում են, մի կողմից, արժեքների, մոտեցումների, պարկերացումների, քաղաքակրթական կողմնորոշումների, մարդկային գոյի սոցիալական արժեվորման որոշակի ունիվերսալացումը, ինչպես նաև համամարդկային վրանգներին համարել դիմակայելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ մարդկային բնության բազմերանգության, ինքնության որակների պահպանման ու բարելավված որակներով վերարտադրման գերխնդիրը:

Գլոբալացումը տեսակի վերացում չէ, այլ շեշտադրման փոփոխություն՝ մասնակիից՝ ընդհանուրին, ներփակվածությունից՝ ընդհանուր համակեցության դաշտի մեծացման, առավել ընդհանրական շահերի ներդաշնակման հենքի վրա քաղաքակրթական առավել բարձր մակարդակի գոյակցություն:

Գլոբալացումը նաև օբյեկտիվ ընթացք է՝ թելադրված մարդկային ճանաչողության եւ կոմունիկատիվ հնարավորությունների նոր վիճակով, գլոբալ վրանգներին դիմակայելու մարտահրավերներով, վերպետական սոցիալ-տնտեսական հարաբերությունների ու արժեքների որակապես նոր դերով: Խնդիրը՝ գլոբալացման օբյեկտիվ ընթացքը ճիշտ հաշվի առնելով, դրա հնարավոր բացասական հետեւանքներից խուսափելն է:

Իրավունքի ոլորտում գլոբալացումը դրսևորվում է ոչ միայն միջազգային իրավունքի դերի մեծացմամբ, այլև ազգային իրավական մշակույթի զարգացման նոր միտումներով՝ առավել ընդհանրական իրավական արժեքների ու սկզբունքների հենքի վրա: Այս գործընթացների արժեհամակարգային առանցքն այն է, որ սոցիալական հանրության ժողովրդավարական զարգացման ուղուն այսօր այլընտրանք գոյություն չունի: Դա համընդհանուր ճանաչում գրած, միջազգային եւ ազգային իրավական համակարգերի հենքը դարձած իրողություն է:

Գլոբալացման ներկա գործընթացները համարժեք խնդիրներ են առաջադրում նաև սահմանադրական մշակույթի, սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների զարգացման միպոմներին: Սոցիալական հանրության համար անկյունաքարային արժեք են դառնում իրավունքի գերակայության երաշխավորումը, սահմանադրական ժողովրդավարության հաստատումը, որոնք քաղաքակրթական զարգացումների խորապարկերում այլընտրանք չունեն եւ մարդկային հանրության ներկան ու ապագան կողմնորոշող արժեքներ են:

Միաժամանակ, դրանց ընկալման, երաշխավորման եւ ապահովման ասպիճանը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ երկրի սոցիալական արժեքների ողջ համակարգի բնույթով, ազգային ինքնության որակներով, գոյատևման ու զարգացման առաջնահերթություններով:

Առանցքային խնդիրն այն է, թե որքանով են ընդհանրականն ու առանձնահատուկն իմաստավորվում եւ դառնում կոնկրետ երկրի համար սահմանադրական ներդաշնակված արժեքներ, եւ որքանով են այդ արժեքները դառնում ապրող իրողություն հանրության բոլոր անդամների համար:

Ակնհայտ իրողություն է, որ Սահմանադրությունը, սահմանադրական հիմնարար արժեքներն ու սկզբունքները չեն կարող դառնալ ներմուծվող եւ արտահանվող ապրանք: Դրանք սովորաբար երկրի, սովորաբար սոցիալական հանրության համար պարմականորեն իմաստավորված, խորապես գիտակցված, ապագան կողմնորոշող իրողություններ են:

Սահմանադրական մշակույթը նոր որակ է ստանում հասարակական-պետական այն համակարգերում, **ուր Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը**, որտեղ սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձեւավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, որտեղ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքները գործում են անմիջականորեն եւ կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ: Նման համակարգերում Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ **քաղաքացիական հասարակության Տիմնական օրենքն է**, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլեւ սահման դնելով իշխանությանը՝ այն սահմանափակելով իրավունքով:

Ընդհանրական այս մտքեցումից է բխում **«ժողովրդավարական սահմանադրական մշակույթ»** հասկացությունը, որը բնորոշ է ժողովրդավարական հասարակական համակարգերին, ուր ներդաշնակված են նաև ազգային ու համամարդկային մշակույթի որակները: Ընդ որում, Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիտարկվել միայն նեղ իրավական առումով, պրագմատիկ իրավահարաբերությունների

կամ վերացական հասկացությունների համապեքստում: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը խոր մշակութային երեսույթներ են, ունեն արժեհամակարգային փոխապայմանավորված ամուր արմարներ, դրանց իմաստավորման, ընկալման ու ճանաչողության քաղաքակրթական հարակ կողմնորոշիչներ ու մակարդակ:

Սույն խորհրդածողովին ներկաներից շարերը, թերեւս, հիշում են, որ 2004թ. Սանտյագոյում հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության գագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» թեման: Արված կարեւոր հետեւություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու իդեալական Սահմանադրություն լինել: Այն յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաեւ միջազգային սահմանադրագիտության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մոտեցումներ: Այն համակարգերում, որտեղ սահմանադրական ժողովրդավարությունը դեռեւս գրնվում է սաղմնային վիճակում, սահմանադրական զարգացումների գլխավոր խնդիրը հիմնական սկզբունքների ու արժեքների ձեւախեղումներից խուսափելն է, այն բանի գիտակցումը, որ **սահմանադրական պետությունը ձեւավորվում է հասարակության համարժեք սահմանադրական մշակույթով:**

Քաղաքակրթության ներկա ձեռքբերումների հոլովություն սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչն այն է, որ **երկրի Տիմնական օրենքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունն ու վերարտադրումը:** Այդ արժեքները, իրենց հերթին, ձեւավորվում են դարերի ընթացքում. յուրաքանչյուր սերունդ վերաիմաստավորում է դրանք ու իր հավելումով երաշխավորում զարգացման շարունակականությունը: Նաջողությունն ուղեկցում է այն ազգերին ու ժողովուրդներին, որոնց մոտ այս շղթան չի ընդհարվում կամ լրջորեն խտրորվում: Ներեւաբար, «սահմանադրական մշակույթ» հասկացությունը կարող է բնորոշվել որպէս հասարակական համաձայնությամբ վարքագծի հիմնարար կանոնների սահմանման ու դրանց երաշխավորման առնչությամբ պարմականորեն ձեւավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած համոզմունքների, պարկերացումների, իրավընկալման, իրավագիտակցության, սոցիալական հանրության հիմքերը կազմող արժեքային որոշակի համակարգի ամբողջականություն:

Սահմանադրական մշակույթը վերացական հասկացությունն է, այն դրսեւորվում է սոցիալական հանրության կենսակերպի բոլոր ոլորտներում: Դա առաջին հերթին բացահայտում է, թե ինչ արժեքային համակարգ է ընկած հասարակական հարաբերությունների եւ պետական իշխանության գործունեության հիմքում: Սահմանադրական

մշակույթի մակարդակով են պայմանավորված բուն սահմանադրական լուծումները, որպես երկրի Տիմնական օրենք՝ դրա առաջադիմական բնույթը: Սահմանադրական մշակույթն իր առարկայական դրսեւորումներն է գտնում ընդունված օրենքների ու այլ իրավական ակտերի, պետության քաղաքական համակարգի, քաղաքական ինստիտուտների ու իշխանության մարմինների գործունեության, դրանց փոխհարաբերությունների, անձի հասարակական կենսադիրքի, նրա իրավունակության մեջ: Պարմության դասերն անառարկելիորեն վկայում են, որ, այսուհանդերձ, սահմանադրական մշակույթի մակարդակի գնահատման գլխավոր չափանիշը երկրում սահմանադրական ժողովրդավարության աստիճանն է, իսկ դրա բարձրացումը՝ սահմանադրական մշակույթի գլխավոր պահանջը:

Նայ ժողովրդի պարմությունը նույնպես սահմանադրական մշակույթի ձեւավորման ուսանելի դասեր է պարունակում, որին ես մի առանձին մենագրություն եմ նվիրել: Այսպեղ ցանկանում եմ հիշարակել միայն, որ սահմանադրական բնույթ ունեցող առաջին ակտերը՝ 301թ. քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո, հայ իրականության մեջ ընդունվել են դեռեւս 365, 444, 488 թվականների ազգային-եկեղեցական ժողովներում, ինչպես նաեւ հետագա դարերի ընթացքում: Տիշարժան է այն, որ 8-րդ դարում Կաթողիկոս Նովհաննես Օձնեցու կողմից, ամփոփելով նախորդ դարերում ընդունված կանոնական սահմանադրությունները, կազմվեց Նայոց Կանոնագիրքը, կամ այսօրվա հասկացությամբ՝ Տիմնական օրենքը: Ուսումնասիրելով այդ ժողովների կողմից կանոնական սահմանադրությունների ընդունման կարգը, ինչպես նաեւ ընդունված նորմերի սահմանադրաիրավական բնույթը, հանգում ենք մի շարք կարեւոր հետեւությունների.

1. այդ ժողովներն իրենց հրավիրման կարգով, ներկայացուցչական պարագայով, աշխարանքային ընթացակարգերով, իրավասությամբ լիարժեք կարող են համարվել սահմանադիր ժողովներ,
2. ընդունված նորմերի հիմքում դրվել են քրիստոնեական ընդհանրական արժեքները՝ ազգային գիտակցությամբ ու ճանաչողությամբ,
3. Կանոնական սահմանադրությունները համարվել են Տիմնական օրենք ողջ ժողովրդի համար եւ իրենց կարեւոր դերակատարությունն են ունեցել հանրության համար ոչ միայն պետականության գոյության, այլեւ դրա կորստի պայմաններում: Իսկ հայ ժողովուրդն իր պետականությունը կորցրել է բազում դարերի ընթացքում:

Ուշադրության են արժանի դեռեւս 1184 թվականին Մխիթար Գոշի կողմից կազմված Դարասարանագրքի նախաբանում բերված հիմնավորումները: Մխիթար Գոշը, Դարասարանագիրքը գրելու անհրաժեշտությունը, մասնավորապես, բացատրում է հետեւյալ պարճառով.

- չարությունը մարդկանց մեջ, չարն ընդհանրապես գորացել է, և արելությունը խափանելու ու սերը հաստատելու համար անհրաժեշտ է դադարեցնել հարստացումը,

- ծուլության պարսպառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակց են օրենքներին, հեղափոխության նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի դադարեցնել հարստացումը անհրաժեշտ է նրանց այդ վիճակից հանելու համար,

- Մովսիսական օրենքը, մարգարեների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն արված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը փոփոխվում են և փոփոխվում են ըստ ժամանակի, ըստ ժողովրդի և ըստ աշխարհաց: Ներկայումս, այնպիսի դադարեցնել հարստացումը է պետք, որ արտահայտի այդ փոփոխությունները,

- առաջ Սուրբ Նոգին ներգործում էր մարդկանց վրա և նպաստում ճշմարիտ դադարեցնել կարգերին, և Նոգին էր օրենք՝ գրված մարդկանց սրտերի մեջ, ուստի գրավոր օրենքի կարիքը չկար: Այժմ, երբ Սուրբ Նոգին այն ազդեցությունը չունի և մարդիկ «վրիպել են» քրիստոնեական եղբայրասիրությունից, ուղղամտությունից, ուստի որոշեցի գրել այս Դադարեցնել հարստացումը,

- դարական գործերը վճռական են նաև երդմամբ, բայց աճել է չարությունը մարդկանց մեջ, և նրանք, չնայած որ երդումն արգելվել է Աստուծո կողմից, այդուհանդերձ, մարդիկ փեղի-անփեղի երդվում են և հաճախ՝ սուր: Խախտված օրինական կարգը վերականգնելու նպատակով գրվեց Դադարեցնել հարստացումը,

- դադարեցնել հարստացումը պետք է օրինականություն և կարգուկանոն հաստատել, որպեսզի արդարադատությունը լինի անաչառ, անկաշառ և արդարացի:

Նորից եմ կրկնում, այս դատադատություններն արվել են դեռևս 12-րդ դարավերջին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Միսիթար Գոշի իրավաբանական հայեցակարգը խարսխվել է բնական (աստվածային) իրավունքի փեսության վրա, որի հիմնական սկզբունքներն են՝ մարդկանց հավասարությունը (Աստուծո առջեւ), ազատությունը, ապրելու իրավունքը, սեփականության անձեռնմխելիությունը եւ այլն: Նա գրնում էր, որ **դրական իրավունքը պետք է բխեցնել բնական իրավունքի սկզբունքներից, որոնք մնայուն են ու անփոփոխ**, իսկ դրական իրավունքն ստեղծվում է մարդկանց կողմից **եւ դրա վրա իրենց կնիքն են դնում ժամանակն ու կոնկրետ հասարակական պայմանները**: Իրավունքի եւ օրենքի հասկացության յարաբերությունների նման խոր ընկալումը, իրավական լուծումները համընդհանուր արժեքներից ու հասարակական կոնկրետ պայմաններից բխեցնելու անհրաժեշտության գիտակցումը հաճախ նույնիսկ մեր օրերում է բացակայում:

Չեմ ցանկանում չարաշահել ձեր ուշադրությունը, սակայն անհրաժեշտ եմ համարում մի անդրադարձ կատարել նաև Նալոբ եւ Շահամիր Շահամիրյանների կողմից

1773-1788 թվականներին գրված Սահմանադրությանը, որը բաղկացած է 521 հոդվածից, կազմված է իշխանությունների փարանջապարան սկզբունքի վրա, հիմքում ունի աստվածային իրավունքի գերակայության սկզբունքը: Անդրադարձ կատարելով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների փարանջապարան ու գործառնական անկախության, սոցիալական պաշտպանվածության, ընդհուպ՝ սահմանադրական արդարադատության եւ սահմանադրական բազմաթիվ այլ հիմնարար սկզբունքների, շեշտվում է, որ «Իրավունքի եւ արդարադատության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհափի ու հասարակության երջանկությունը, ելակետ ունենալով «...օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու» հրամայականը - սա է այդ Սահմանադրության (որն անվանվեց «Որոգայթ փառաց») մեծագույն պատգամը:

Առավել քան այժմեական է նաեւ «Որոգայթ փառացի» ներածության մեկ այլ ընդհանրացումը. «...որքա՛ն ավելի **բարություն** է մեզ հարկավոր, **որ մեր կյանքը զսպենք օրենքով ու ազատությամբ**, որպեսզի արժանի դառնանք Տիրոջ պաշտամունքին...»<sup>1</sup> (ընդգծումը մերն է - Գ.Ն.): Իսկ այդ օրենքները պետք է շարադրվեն «...մարդու բնությանը ներդաշնակ, ըստ մեր բանական հոգու հաճության»<sup>2</sup>:

Պատմության դասերն ակնհայտ վկայում են, որ օրենքը, առավել եւս՝ Նիմնական, իր առաքելությունը կարող է իրականացնել հաջողությամբ, եթե նրա առանցքը մարդն է՝ իր սոցիալական էությամբ, ինքնության որակներով, ճանաչողության աստիճանով, քաղաքացիական հասունությամբ, իրավական մշակույթով եւ իր արարչագործ էության իրացման ձգտումներով: Ու թեեւ մարդիկ Արարչին ձգտելու փորձեր կաճաններով են առաջ գնում, միեւնույն է՝ նպատակակետը մեկն է, Աստված մեկն է:

Անհայտ է նաեւ այն, որ որքան էլ իրավական գործալացման ներկա պայմաններում կարեւորվում է համընդհանուր արժեքների ու միջազգային իրավունքի դերը, վերջինիս իմպլեմենտացիայի նշանակությունն ազգային իրավունքում, այդ իմպլեմենտացիան չի կարող փոխարինվել իմպլեմենտացիայի, արհեստական պատվաստման եղանակով ազգային իրավական համակարգի վերափոխման: Օրգանական սերտաճումը եւ արժեհամակարգային ներդաշնակումը միայն կարող են դրական ձեռքբերումներ արձանագրել: Նախկապես ազգային-պետական կազմավորումներում սահմանադրաիրավական արժեքային համակարգերը ձեւավորվում են դարերի ընթացքում, ներառում են իրավական նորմերի, ավանդույթների ու սովորույթների ողջ համակարգը, եւ դրանք են ընկած ինքնության որակների ու փեսակի պահպանման հիմքում: Ուստի **սահմա-**

<sup>1</sup> Որոգայթ փառաց, Երևան, 2002, էջ 15, էջ 38:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 71:

**նադրական մշակույթը չի կարող ապագային լինել:** Նավասարապես այն չի կարող նաեւ համամարդկային ընդհանրական արժեքների կրողը չլինել: Ուստի առաջին հերթին Սահմանադրությունն է կոչված ապահովելու վերագգայինի ու ազգայինի ներդաշնակությունը, համամարդկային արժեքների ու ազգային առանձնահատկությունների խելամիտ համարելումը՝ նպատակ ունենալով ապահովել տեսակի պահպանման ու բարելավված որակներով վերարտադրման անհրաժեշտ միջավայր, մարդու ստեղծարար նախասկզբի իմաստավորման ու երաշխավորված իրացման անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ:

Ներելաբար, Սահմանադրության գերակայության երաշխավորման գլխավոր խնդիրը հանգում է այդ ներդաշնակ արժեքային համակարգի երաշխավորմանը: Դրանով են պայմանավորված նաեւ դատական սահմանադրական վերահսկողության մոդելների ու ձեւերի զգալի փոփոխությունները փոքրեր երկրներում:

Քննարկվող հիմնահարցի շրջանակներում ցանկանում եմ համառոտ անդրադարձ կատարել նաեւ սահմանադրական արդարադատության դերին ու համակարգային առանձնահատկություններին վերաբերող որոշ հարցերի:

Ողջ աշխարհում սահմանադրական վերահսկողության գերագույն խնդիրը Սահմանադրության գերակայության երաշխավորումն է: Այսօր աշխարհի 110 երկրներում դա իրականացվում է դատական սահմանադրական վերահսկողության եվրոպական մոդելի՝ հատուկ մարմինների միջոցով, իսկ 48 երկրներում՝ ամերիկյան մոդելի օգնությամբ: Սակայն նույն եվրոպական մոդելի պայմաններում առանձնահատկություններն այնքան բազմազան են, որ դժվար է դրանք դիֆարկել մեկ հարթության վրա: Տրամաբանական հարցեր են առաջանում.

- որքանով էր պատմական անհրաժեշտություն սահմանադրական դատարանների ստեղծումը,

- որո՞նք են դրանց համակարգային դերակատարության հիմնական բնութագրիչները նոր հազարամյակում:

Այս հարցերի պատասխանը փնտրելիս՝ մենք փորձեցինք դիմել նաեւ ամենագեղ բնությանը եւ մի համեմատական վերլուծություն կատարել: Վերջին փաստանյակներում գիտական միտքը մանրակենսաբանության և բժշկագիտության ոլորտում կատարել է մի շարք լուրջ ընդհանրացումներ, որոնք բացառիկորեն կարևոր են նաև հասարակական օրգանիզմի ներքին ինքնապաշտպանության հիմնական սկզբունքների և մեխանիզմների համակարգային ուսումնասիրության, սահմանադրորեն ամրագրված գործառնական հավասարակշռվածության կայունության ապահովման տեսանկյունից: Գրեթե արսիոմատիկ սկզբունքների թվին են դասվում, որ.

- առավել կախարյալ ներքին ինքնապաշտպանունակ համակարգով օժտված է մարդը, որի իմունային համակարգը ձեւավորվել է շուրջ երկու հարյուր միլիոն փարինների ընթացքում,

- մարդու իմունային համակարգի, ինչպես նաև այլ բարդ կենսաբանական համակարգերի գործառնությունն ընդգրկում է ամբողջ օրգանիզմը, ունի հիերարխիկ և ինքնակառավարվող բնույթ,

- օրգանիզմի յուրաքանչյուր բջիջ օժտված է ինքնապաշտպանության որոշակի ռեսուրսներով, որոնց սպառման դեպքում միանում են օրգանիզմի այլ փոխկապակցված կառուցվածքային փարրերի պաշտպանիչ համակարգերը,

- իմունային համակարգի գլխավոր առաքելությունն է բնական հավասարակշռվածության և կայունության պահպանումն ամբողջ օրգանիզմում, քանի որ խախտված հավասարակշռության չվերականգնումը բացասական ներուժի կուտակման և իռացիոնալ վերարտադրության պատճառ են դառնում,

- Ֆիզիոլոգիական հավասարակշռվածությունը, օրգանիզմի իմունային և նյարդային համակարգը գտնվում են կայուն ներդաշնակության վիճակում,

- ցանկացած պաթոլոգիա ակտիվացնում և գործողության մեջ է դնում ինքնապաշտպանության ողջ համակարգը,

- միշտ որոշակի քանակությամբ գոյություն ունեցող իմունոհորմոնների թիվը պաշտպանական ռեակցիայի դեպքում աճում է մինչև պաշտպանիչ գործառնության լիարժեք իրականացման համար անհրաժեշտ քանակի: Սակայն, եթե պաշտպանիչ ունակությունն անբավարար է գործառնական հավասարակշռվածության վերականգնման համար, առաջանում է էկզոգեն միջամտություն պահանջող ախտորոշիչ իրավիճակ,

- զարգացած իմունային համակարգերին բնորոշ են ինքնապաշտպանության հստակ փարբերակումը և ռացիոնալությունը, բջջային համակարգի և օրգանիզմի գործառնական հավասարակշռության ամբողջականության և ներդաշնակության ապահովման համար նպատակասլաց, ծրագրավորված գործողությունների հստակ հերթականությունը,

- ցանկացած դինամիկորեն զարգացող համակարգ պետք է ունենա ներքին գործառնական հավասարակշռության և ինքնապաշտպանության ապահովման համարժեք ենթահամակարգ,

- իմունային համակարգի գործառնության փրամաբանությունը կայանում է հետևյալում՝

ա/ խախտված հավասարակշռության բացահայտում,

բ/ խախտման բնույթի որոշում և դիսբալանսի հաղթահարման համար մարտավարության և «գործիքների» ընտրություն,

զ/ հավասարակշռության վերականգնման ժամանակ նոր խախտում թույլ չտրվու երաշխավորում:

Այս սկզբունքները, որոնք մենք երկար ամիսներ ուսումնասիրել ենք բժիշկների, կենսաբանների, համակարգային կառավարման մասնագետների հետ, ձևավորվել են, ինչպես նշվեց, միլիոնավոր փորձի ընթացքում՝ կենդանի օրգանիզմի զարգացմանը զուգահեռ: Մարդկային հասարակությունը գոյություն ունի ընդամենը մի քանի հազար փարի, և որպես միասնական օրգանիզմ, որպես բարդ համակարգ դեռ չի հասել համակարգային կապարելության և ներդաշնակության մակարդակի: Միայն XX դարի օրինակը, որը փարել է ավելի քան 130 միլիոն մարդկային կյանք՝ հասարակական համադեպների հետևանքով, միջազգային ահաբեկչության այսօրվա ալիքը, փարածաշրջանային ջրծվող կոնֆլիկտները հանդիսանում են հասարակական իմունային անբավարարության առկայության վառ վկայություններ: Պատահական չէ նաև, որ դարական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների ձևավորման գաղափարի առաջացումը համընկնում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի հետ, իսկ նրա համակարգային զարգացումը դարձավ իրականություն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Մենք գտնում ենք, որ որոշ չափով «ենթագիտակցորեն» մարդկությունը մոտենում է **հասարակական օրգանիզմի որակապես նոր իմունային համակարգի** ձևավորման գերխնդրին: Ողջ 20-րդ դարը համոզիչ կերպով ապացուցել է, որ **կրոնը, ավանդույթները, բարոյական նորմերը, հասարակական վարքագծի ողջ արժեքային համակարգը, համակարգային ինքնապաշտպանության այլ մեխանիզմները ոչ լիարժեք են ապահովել հասարակության զարգացման դինամիկ հավասարակշռությունն ու կայունությունը նոր իրողությունների պայմաններում:**

Փաստորեն, սահմանադրական վերահսկողությունը դառնում է քաղաքացիական հասարակության և իրավական պետության առանցքային փարերից մեկը: Սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս «գապումների և հակակշիռների» ոլորտում, իսկ դրա գլխավոր խնդիրն է խախտված սահմանադրական հավասարակշռության մշտական, անընդհատ և համակարգային հայտնաբերումը, գնահատումը և վերականգնումը: **Սահմանադրական վերահսկողությունը չի թույլատրում գործառնական խախտումների իռացիոնալ վերարտադրություն կամ բացասական հասարակական էներգիայի կուտակում**, որը կրիտիկական զանգվածին հասնելուն պես կարող է պայթյունի միջոցով հանգեցնել նոր որակի: Գործնականում սա ընտրություն է դինամիկ, էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացման միջև:

Սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի գործողությունը կոչված է երաշխավորելու սահմանադրական կայունությունը և բացառել հասա-

րական համադրությունները՝ հենվելով, առաջին հերթին, այնպիսի սահմանադրական սկզբունքների վրա, ինչպիսիք են ժողովրդաիշխանությունը, իրավունքի գերակայությունը, իշխանությունների փարանջատումը, պետական ինքնիշխանությունը, Սահմանադրության գերակայությունը և այլն:

Ներելաբար, սահմանադրական դափարաններն իրենց իրավական դիրքորոշումներով կոչված են իրական բովանդակություն հաղորդելու ազգային եւ վերազգային արժեքների ներդաշնակմանը՝ սահմանադրաիրավական յուրաքանչյուր լուծում փնտրելիս համադրելով ինչպես միջազգային փորձն ու երկրի միջազգային պարավորությունները, այնպես էլ հասարակական պրակտիկայի կողմից առաջադրված խնդիրները: Նման մոտեցմամբ է միայն հնարավոր երաշխավորել ժողովրդավարական երկրի Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որը նաեւ 21-րդ դարի սահմանադրական մշակույթի բնորոշ առանձնահատկությունն է: